Մ. Մարտեսի-Յակոբեանցի

ՊԵՏՐՈՍ ԴՈՒՐԵԱՆ

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ

ԺՈՂՈՎԱԾՈՒ

ՇՈՒՇԻ
ՏՊԱՐԱՆ ԵՂԻՍԱԲԵԹ Մ. ՄԱՐՏԵՍԻ-ՅԱԿՈՎԲԵԱՆՑԻ
1905

Дозволено цензурою 8 Іюля 1904 года, г. Тифлисъ.



Գրակ
230

ՊԵՏՐՈՍ ԴՈՒԼԵԱՆ.

Դուլեան երկրաչափագործ Աբրահամի որդին էր. ծնունդ է Պօլսի Դանկիսար թաղում 1851 թ. մայիսի 20-ին աղքատ ընտանիքի մէջ: Թշուառութեան յատուկ խիստ միապաղաղ շարքաշ կեանքով մի ան ժամանակ մնալուց յետոյ նրան վիճակուեց մնալու տիրացու մանկավարժների մօտ Դանկիսարի ճեմարանը, ուր նոյն շարքաշութեամբ տարուեց Նարեկ, Սաղմոս, քերականութիւն, դասապարտելով միանգամայն մատաղ միտքն ու հոգին պատուելիական հասկացողութիւններով: Բայց այդ մթնոլորտը նրան չմոնատրեց: Շատով երեան եկաւ պատանի Դուլեանի մէջ ապագայում բացակատող հրդեհի առկայծումները. ջերմացնելով նրա զգայուն հոգին ու միտքը եւ պարզելով նրա վառվռուն երեւակայութիւնը:

Ոտանը շաղաքուած, դալոցից դուրս գալով, Դուլեանը մոռացաւ աշակերտական անհոգ ժամերը, ընտիրեան պարզեւած ուրախութիւնը կեանքը, որոմնեան շատով վրայ հասան տառապանքը, ծնշող վիճաութիւնը եւ յուսահատ վայրկեանները: «Ո՛վ գիտէ, քանի քանի անկիւններ

զանազան տաղանդներ բաշխելութեան պատասխանատու անգործ ու վնասակար կը կենան, միանգամայն եւ իրենց աղքատ ընտանեացը բոլոր բարու զգացումները կը տանջուին», բացականչում է Գուրեան, տեսնելով իր անգործութիւնը կամ իր կոչման անհամապատասխան պաշտօն ստանձնելը: Հոգատար սիրտ ունեցող Պետրոսը ուզում էր ընտանեկան հոգսերը թեթեւցնել սեղանաւորի մօտ աշակերտ մնալով, մանաւոր դասեր տալով, ներքսանութիւն անելով եւ վերջն էլ թատերախաղեր գրելով: Թէեւ ստացել էր սահմանափակ կրթութիւն, այնուամենայնիւ ժրաջանութեան եւ ընդունակութեան շնորհիւ սկսում է թատերախաղեր գրել կամ թարգմանել՝ ծախելով «քանի մը ստակով» կամ «քանի մը ծափով», այսինքն ոչնչով. հետեւապէս չկարողացաւ ցանկալի արդիւնքն ստանալ, ուստի անժամանակ ընկնելով ընտանեկան հոգսերի տակ բոլորովին ֆիզիքապէս եւ հոգեպէս ուժասպառ եղաւ:

Ստատը անդուլ աշխատանքը, գրկանքների շնորհիւ վարած անառողջապահիկ կեանքը եւ աղքատութեան պատճառած վիշտը մաշեցին այդ նոր փթթող կեանքը թողնելով անհիւրընկալ թոքախտի ձիրաններում տառապելիս: 1871 թ. ընկած նա կորցրեց իր աշխուժութիւնը, այտերի կարմրութիւնը, խորշոմներով պատեց դալկացած

ճակատը եւ այսպէս հալելով ու մաշելով – տատաճային կրակով վառած սկսեց երգել բնութեան դաժանութիւնը, մահուան սարսափը, շվայլած կեանքի քուն կարօտը, մինչեւ որ վերջապէս անզօր գտնելով հիւանդութեան դէմ կռուելու, վաղահաս մահ է գտնում 1872 թ. յունվարի 20-ին՝ 21 տարեկան հասակում:

Ընչուշտ, Դուրեանի դատութեամբ թունաւորուած եւ վիրաբից կեանքը շատ շատերի նման կարող էր բորբոքին կոչել, ոչնչանալ, յիշատակը մոռացուել, որովհետեւ նա ոչ ոյժ է ունեցել բաշխաւորելի գինուոր լինելու անհատական ազատութեան համար, ոչ խիստ բողոքող ոգի՝ բնութիւնների դէմ, ոչ եղել է աշխարհը քարկոծելու ենչացող մարմնացեալ եռանդ եւ ոչ էլ ազատութեան, հաւասարութեան եւ եղբայրութեան երգիչ (Անգլիական լորդ Բայրոնի նման, որի հետ համարձակել են համեմատել Դուրեանին): Սակայն երբեւ մեծ բանաստեղծական տաղանդ ունեցող մարդ՝ «ողբերգել է իր հոգու պատմութիւնը» եւ անմեղութեամբ ու անոյշ սրտի տենչանքների ու վշտերի հետ արտայայտել եւ ընդհանուր մարդկային զգացմունքը: Նրա հրդեհուած սրտի, վարդագոյն աբշալոյսի շատ հոգու անհնութեան, լրջանքի փոփոխութիւնների շատ բիւրատոր խորունկ խոցերի ազդու, բայց կիսատ թրթռումներն են պատճառ

եղած, որ նա անմահացել է մեր խիստական բնաբերգությանն հայը կոչելով եւ մեզ՝ հանձարեղ բանաստեղծ լինելու յոյս ներշնչել մահուան մտերքը գրած իր մի բանի ոտանաւորներով:

Դուրեան գրել է թատերգութիւններ, նամակներ, 13 տարեկան հասակից սկսած ոտանաւորներ: Նրա խիստական արժանիքը մի տարուայ բանաստեղծութիւններն են կազմում, որի բնաբերգությունը վարակուած է ֆրանսիական ռոմանտիզմի հոգեով: Դրրեւ բնաբերգու բանաստեղծ նրա բնաբի յուսակուռ յարերը հնչեցրել են **ուր, բնութիւն** եւ **վիշտ** եւ մասամբ հայրենասիրութիւն: Մի կողմից նրա ստեղծագործող ոյժի եւ հոգեկան կարողութիւնների անհատնումութիւնը, մտքի եւ հոգու զարգացման թերութիւնը, միւս կողմից ֆրանսիական ռոմանտիզմի ազդեցութիւնը Դուրեանի բանաստեղծութեան մոտիվները դարձրել են տարտամ, անորոշ եւ մշուշապատ: Նա Լամարտինի նման զգացմունքի բանաստեղծ է եւ ոչ գաղափարների, նա երգել է իր զգացած՝ բնութեան անարդարութիւնը եւ ճնշուած սրտի տանջանքները:

Դուրեանի սիրոյ յարերին զարնող հրեշտակը երակամութեան մէջ կարծես գոյութիւն չունի, այլ իբրեւ աստուածացած էակ կանգնած է նրա դիմաց, որի առաջ բանաստեղծը խոնարհ է ծիսում,

արցունքները թափում եւ այրում ու մոլորում նրա կարօտով. «նրա արցունքները լաւա են ու մեղր»: Բայց զգացմունքների հեղեղը եւ թախծութիւնը կեանքից յուսախաբուած պատանի Դուրեանի վշտահար քնարի մեղեդիների մէջ են մեծ թափով արտայայտուել: Բանաստեղծը սիրում էր աշխարհը, ուզում էր ապրել, սնունդում էր սիրել, բայց կեանքը շատ շուտով թունաւորում է նրան վշտոտ եւ յոռետեսական հառաչանքներ արձակել տարով, մահը երազել տարով եւ երբեմն էլ այս մելancոլոտ հեշիններին հետ խառնելով քաղցրի ձայներ ու ըմբոստ ոգու արձագանքներ:

Հաբուծուած անհատական կեանքի վշտերով նա չի ուզեցել, աւելի շատ, չի կամեցել բնութեան գրկում մոռանալ տալ իր ցաւը. ուստի բնութիւն չէ երգել, ամբողջական նկարագրութիւն չէ արել, միայն իր թախծալաւ հոգու դրութիւնը երբեմն զուգադրել է բնութեան հետ ու կատը նկարագրութեանը, որից եւ առաջացել է ոճի կենդանութիւն եւ գունեղ արտայայտութիւն:

Դուրեան իր ժամանակին չկարողացաւ գրահատուել անշուշտ այն պատճառով, որ **արդուիթեամբ պատճառուած** լինի «գնա մեռիր, արի սիրեմ» հայերի դատանաքը: Մատաղ սերունդը հանդուցեալի յիշատակը յարգեց ոչ միայն յուղարկաւորութեան փառաւոր հանդէսով, դրուատա-

լից դամբանականներով, այլ մահուանից յետոյ նրա գործերը հրատարակեց սեփականութիւն դարձնելով ամբողջ հայութեան: 30 տարուայ ընթացքում եղել են շատ հրատարակութիւններ եւ ուսումնասիրութիւնները, որոնց ցուցակը դնում՝ ենք այստեղ.

1) ա. տպ. «Տաղք և թատերգութիւնք». Գ. Դուրեանի. (հարազատ չէ և պակաս են երեք թատերախաղ) սրբագրութեամբ Փէլէկեանի: 1872 թ. Պոլիս:

2) բ. տպ. Ոտանաւորներից հանուած են հայրենասիրականները, թատերգութիւններից մնում է միայն մէկը. աւելացրած է Դուրեանի նամակները և մի քանի սեպագրութիւններ ձեռագրներից: Հրատարակել է Բարսեղ էֆ. Էքսերճեան բուն ձեռագրից, իսկ Փէլէկեանի սրբագրութիւնները էջերի տակ ծանօթութեամբ: Պոլիս 1892 թ.

3) գ. տպ. Ոմն պ. պ.-ի խմբագրութեամբ—Բագում 1900 թ. 2-րդ տպագրութիւնից անփոփոխ միայն ոտանաւորները:

4) դ. տպ. Նոյնը Երեւանում 1904 թ.

1898 թ. «Լումայ»-ում հրատարակուեց «Արտաշէս աշխարհակալ» ողբերգութիւնը ամբողջութեամբ:

Լուսֆիանի վրայ գրած դամբանական հրատարակած է Ա. Պիպոռճեանի ճաշակ հայ մատենագրութեան 2-րդ հատորի մէջ:

Նամակները հրատարակուեցան նախ Պոլսոյ «Արեւելք» թերթում և յետոյ անցան 2-րդ հրատարակութեան մէջ:

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՒ ՑՕԳՈՒԱԾՆԵՐ.

1) Բարսեղ էֆ. (այժմ Հմայեակ քահ.) Էքսերճեան. ընդարձակ կենսագրութիւն առանց քննութեան:

2) Ըշակ Զօպանեան. կենսագրութիւն և քննադատութիւն։

3) 1892 թ. «Մասիս». Գէորգ Զօպանեանի Դուրեանի մասին ներբողեան և հրաւէր հրատարակութեան։

4) Վեսելովսկի «Հայ յոռետես բանաստեղծ». թարգմանած Լումայի մէջ։

5) Վ. Նալբանդեան. Պետրոս Դուրեան. «Մշակ» 1901 թ. № 167, 168, 169 170,

6) Ալ. Ռուրէնի. Հեծեծանքների երգիչը. (Գրիգ. Էտիւդ). «Մուրճ» 1903 թ. № 3.

7) Կենսագրութիւն Դուրեանի. ճաշակ հայ մատենագրութեան Ա. Պիպոռճեանի II հատ.

8) Դուրեան. Տիգ. Ալփիարեան. Մասիս» 1892 թ. էջ 176—8.

9) Դուրեանի թատերախաղերը. Ա. Զօպանեան. «Մասիս» 1893 թ. էջ 39—40.

10) 2-րդ հրատարակութեան առթիւ Էքսերճեանի արած կամայական սխալների մասին նկատողութիւններ. Ա. Զօպանեան. «Հայրենիք» 1892 թ.

11) Պետ. Դուրեանի մահը Ա. Զօպանեանի. «Մասիս» 1892 թ. էջ 241—2.

12) Պետրոս Դուրեան. Զմշկեան օրացոյցի մէջ 1895 թ. բանաստեղծի նկարով։ Դուրեանի լուսանկարը առաջին անգամ պատրաստել տուաւ Էքսերճեանը նկարիչ Պարսամեանին («Մասիս» 1892 թ. էջ 268) Դուրեանի ազգականների և նման անձերի զանազան նման մասերից վերակազմելով։

Հ. Ամատեան։

ՊԵՏՐՈՍ ԴՈՒՐԵԱՆ

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ

ԻՑԻՒ ԹԷ.

Ո՜հ, ինչ ես դու, սէր, երկնի հուր կամ ժպիտ....
Զունի երկին աչացդ կայծերն ու կապոյտ,
Վարդը չունի քու լանջդ ամբիծ՝ լուսափթիթ....
Զունի լուսինն վարդերն շիկնում այտերուդ։

Դիշերն երկնի կայծից՝ լուսնոյն սիրադէմ,
Ցերեկն ալեաց՝ ծաղկանց ժպտիս.... մէկո՞ւն զէթ....
Իսկ քեզ համար ես արցունքով կ՝ աղօթեմ,
Դու չես շնորհեր նայուածք մ՝ ինձ հուր աչերդդ։

Ընդեօք էակ մ՝ ես թէ երկնի զբաղթուն.
Կը նախանձին փայլիդ վերայ վարդ լուսնակ,
Զայնիկդ ապշած լսելով քաղցր ու թրթռուն՝
Նոճերու մէջ սրգայ լրռիկ լուսինեակ։

Ծնէի իցի՞ւ թ՝ հեւացող հով մ՝ անուշիկ,
Եւ զգուելով երազք ճակտիդ այդ անսուդ,
Ցայի շունչըս շուրթերուդ մէջ ես յուշիկ,
Լոկ սրբելով, եթէ շողաք աչքդ արտասուք։

Պարաէզդ իցիւ թէ փթթէի վարդ լայող,
Եւ երբ գայիր այգուն շաղին ժպտով պերճ՝
Գոյնով ներկել այտերդ, թափել գոգդ իմ ցող,
Վերջին շնչիկս ի գիրկդ առնէր ելեւէջ։

Բլբէի ես իցի՛ւ թ՝ առու մը վրճիտ,
Եւ, երբ յուշիկ գայիր մօտ իմ եզերքին,
Ցոլանար իմ հայելւոյս մէջ քու ժպիտ՝
Պզտորելով կապոյտ ալիքս՝ ցամքէին։

Ա՜հ, իցի՛ւ թէ լինէի ես ճառագայթ,
Ջողշողայի դէմքիդ վրայ վայրիկ մի,
Խարէի ջեզ թ՝ ես աւելի գեղազարդ,
Ի՝ անուշարոյր մազերուդ մէջ մարէի։

Այլ ո՛չ, անզո՛ւթ, եթէ արւիր մէկուն սէր,
Իցի՛ւ թ՝ անոր գերեզմանին քարն լինիմ,
Եւ դու թօշնած գաս շնչել շուրջս... արտասուել...
Քեզ հրպելու համար հարկ լոկ դոլ չիրիմ...

1867 թ.

ՄԱՆԱՒԿՆ ՍՈՒ ԽՍԱՅ.

Ո՛վ խաչափայտ
Դու քառաթեւ,
Որոյ ճակատ՝
Սիրոյ արեւ՝
Գամված Յիսուս՝
Քշեց խոնարհ
Հոգի եւ լոյս
Սէր ընդ աշխարհ,
Ընդունէ իմ հոգիս հեզիկ, փառաճառանչ
Թեւերուդ տակ, եւ սրբվեցուր ինծի հաւատ,
Սէր, յոյս, որով միշտ բարեխէ իմ փափուկ լանջ
Եւ փարատէ լուսոյդ խաւարն որպէս վրհատ.
Սրբվիմ աղօթք
Դառնալ քեզի՝
Երբ խութից ոտք
Իմ հանգիպի
Սեւ սատանին՝
Որ ճգնի միշտ
Դիւթել զհոգին
Ի մութ, ի վիշտ։

1871 թ.

ՄԱՆԻՉԱԿ.

Ով մանիշակ, մանիշակ,
Ինչո՞ւ այդպէս գլխիկոր
Նայիս հողին սրգաւոր,
Ո՛հ, ինչի՞ այդ նրշանակ։
Միթէ դու կո՞յս մը տեսար,
Որուն աչաց քով կապուտ՝
Ըզքեզ կը տար այնչափ մութ,
Որ կը սրգաս սեւահար։
Եթէ դու ալ վարդին պէս
Ունենայիր դոյդն բոսոր,
Կը շիկնէիր, ինչպէս որ
Շիկնեցաւ այն վարդը վէս,
Երբ տեսաւ օր մը նեբա
Վարդերն ամբիծ այտերուն։
Շուշանին պէս դալկութիւն
Եթէ ըլլար քու վրրա՝
Դժգունէիր, որպէս նա,
Ինչպէս որ օր մը շուշան
Դրժգունեցաւ անընշան՝
Տեսաւ ձեռներն երբ նեբա։
Եւ դեռ ըսեմ... օր մ՚ երկին
Ամպոտեցաւ... էր արդեօք...
Երբոր կ՚ընէր նէ աղօթք
Վերն յառած աչքն ու հոգին։

1871 թ.

ՍԻՐԵՑԻ ՔԵՋ.

Զաղի, շողի ժամք էին,
Վարդից հրդեհ կար յերկինն՝
Փոխան ամպոց հուր հիւսքի,
Ցեղա՞ր մարգրիտ եւ ոսկի։

Թաւուտքի մը խոր ծաղկոտ
Ընկողմանած նուագկոտ՝
Կը հեւայիր դու դժգոյն,
Ամբան սիւգի մը հանդոյն։

Աչերդ սիրոյ ատրուշան....
Եւ մատներովդ գերդ շուշան՝
Կը փնտէիր ծաղիկ մը,
Ցառած շողից աչքդ երկնի։

Հիանայի թէ ինչպէս
Փնտել թերթեր վարդին վէս՝
Եւ թափթըփել 'ի քո գիրկ
Զօրէն մատուանքերդ գիրդ։

Եւ նրուագկոտ այդ աչեր
Նրշուլէին նա՞ր եթեր,
Եթեր մ' ատանդց, ուր փոխան
Հրաշէկ սրլաքք կը շողան։

Երիր աչացդ մէկ կայծին
Եւ մէկ վանկիդ գիս գերին,
Զրդթայեցիր գիս, անդութ,
Նշոյլներովն վեհ հոգւոյդ։

Թող, սիրաս, ինձնէ գնա հեռի.
Զուգեմ հոգւոյս թագուհի
Քեզ՝ որոյ կուրծն վարդի թերթ,
Այլ կրքանիա սիրան է զէթ։

Դու որ գիտես լոկ բուրել,
Գիրդ սրտերու վէրք փորել,
Եւ կը սիրես, երբ կարի՞
Քեզ պաշտող սիրան արիւնի։

Թաւուտքի մը շուք նստեմ
Երբ որ մենիկ արտասուեմ,
Հոն ես դու, կը գտնես դիս
Տերեւներէն կը խօսիս։

Երբ առուակին մէջ փաղփուն
Կուգեմ մոռնալ դէմքդ, դուն
Դարձեալ հոն կը գտնես դիս
Ալիներէն կը ժպտիս։

Երբ կը փախչիմ ժայռ ու սար՝
Ջախջախել սիրաս եւ քրնար,
Հոսին մէջէն միշտ մընչես՝
Թէ բնաւ դիս սիրած չես....

Գրկեմ արտոմս այդ ցուրտ հող,
Դարձ չը դիպիմ քեզի թող,
Գոյն մ' է նաեւ գերեզման....
Գաղ խորունկ սիրտ մ' անոր նման...

1869 թ.

ՍԻՐԵԼ.

Բոյլ մը նայուածք՝ փունջ մը ժըպիտ՝
Քուրայ մը խօսք դիւթեց իմ սիրտ։

Ես ուզեցի լուռ մնանալ,
Սիրել փըթիթք՝ խորշեր թաւուտ,
Սիրել կայծերն երկնի կապուտ,
Առաւեան շաղն՝ իրիկուան բալ՝
Ճակատագրիս սեւ դիր կարդալ՝
Խոկալ՝ սուգիլ՝ ըզմայլիլ սուտ։

Ա՜հ, խուրձ մը վարս՝ եղեմ մը շունչ՝
Ըրջազգեստ մը շրշեց իմ շուրջ։

Ես ուզեցի լոկ ու մենակ
Սըրտակցել ջինջ վտակին հետ,
Ցիշատակի շունի նա հետ,
Սիրտ մ՝ որոյ մինչ սուզիմ յատակ,
Գրանեմ դիս հոն դժգոյն յատակ,
Գաղտնիք մ՝ ունի—այն անթիւ վէտ։

Եթեր մը տրոփ սրտի լսեցի,
Հծծեց.—«Կ՝ուզեմ, սիրտ, եկ ինծի»։

Ես ուզեցի սիրել դեմիւռ,
Ոչ երկնքէն թըռչի բեկեկ,
Նա չը սիրեր խոցել երբէք,
Հոգի մ՝ որոյ գաղտնիքն է բոյր,
Գիտէ շոյել երազներ բիւր,
Երկնի բոյրն յուշ կ՝ածէ առ հէր։

ԼՈՒՍԱՎՈՐ ԳՐՈՒՄԸ
ՖՈՒՆԴԱՄԵՆՏԱԼ
ԱՆԱԴԵՄԻԱ

Ո՛հ, փունջ մը բաց փըսփըսաց ինձ.
— «Կ՚ուզէ՞ս պաշտել հոգի մ՚ անբիծ»։

Ես ուզեցի քընարով մի
Լոկ սիրել հոս՝ հոս դալկահար,
Պաշտել՝ գրկել միայն քընար,
Սիրող էակ ճանչել զանի,
Ըստ իմ քրմաց լարել ազի
Եւ սրտակցել սիրողաբար։

Նէ մօտեցաւ յուշիկ՝ ըսաւ.
— «Քնարդ է ցուրտ սիրտ, եւ սէրդ՝ ցաւ»։

Թօթուեց թեւերն հոգիս մոլար,
Ճանչեց ըզնէ, զեղ ու կըրակ՝
Սիրան անապատ, ինչպէս վտակ՝
Ամեն՝ ինչպէս սիւգ դալկահար՝
Հաւատարիմ՝ ինչպէս քընար,
Հրաժեշտ տըւաւ կեանքի մենակ։

Բոյլ մը նայուածք՝ փունջ մը ժպիտ՝
Քուրայ մը խօսք դիւթեց իմ սիրտ։

1871 թ.

Լ Ա Ռ Կ*).

Ինչու ապշած են, լրճակ,
Ու չեն խայտաբ քու ալիակը,
Միթէ հայրոյդ մէջ անձկաւ
Գեղուհի՞ մը նայեցաւ։

Եւ կամ միթէ կ՚զմայլին
Ալեակդ երկնի կապոյտին,
Եւ այն ամպոց լուսափթիթ,
Որք նմանին փրփուրիդ։

Մելամաղձոտ լրճակ իմ,
Քեզ հետ ըլլանք մրտերիմ,
Սիրեմ քեզի պէս ես ալ
Գրաւիլ, լսել ու խոկալ։

Ո՛րքան ունիս զու ալի՝
Ճակատս այնքան խոկ ունի,
Ո՛րքան ունիս զու փրփուր,
Սիրտս այնքան խոց ունի ըիւր։

Այլ եթէ զոգդ ալ թափին
Բոյլքն ասահզաց երկրնքին,
Նըմանիլ չես կրընար զուն
Հոգւոյս՝ որ է բոց անհա՛ւն։

---

*) Պօլսում երգւում է ժողովրդական «Մայրիկ, հիւանդ ըլլամ նէ» երգի եղանակով, որ յուզական է։

Հոգ աստղերը չեն մեռնիր,
Ծաղիկներն հոգ չեն թառմիր,
Ամպերն չեն թերջիր հոգ,
Երբ խաղաղ է գու եւ օդ։

Լռնակ, գու ես թագուհիս,
Զի թ' հովէ մ' ալ խորշումիս,
Դարձեալ խորքիդ մէջ խրատով
Զիս կը պահես դողդղալով։

Զատերը դիս մերժեցին,
«Քընար մ' ունի սոսկ»—ըսին.
Մին՝ «Դողդոջ է, գոյն չունի»—
Միւսն ալ ըսաւ.—«Կը մեռնի»։

Ոչ ոք ըսաւ.—«Էք տրդայ,
Երգեօք ինչու կը մրխայ,
Թերեւս ելլայ գեղանի,
Թէ որ սիրեմ, չը մեռնի»։

Ոչ ոք ըսաւ։—«Սա տղին
Գատանք սիրտը տրրտմագին,
Նայինք ինչ՞ը գրուած կան...»
—Հոն հրդեհ կայ, ոչ մատեան։

Հոն կայ մոխիր... յիշատակ...
Ալեակքդ յուզի՞ն թող, լռնակ,
Զի քու խորքիդ մէջ անձկաւ
Ցուսահատ մը նայեցաւ...

1871 թ.

ՊԷՏՔ Է ՄԵՌՆԻԼ.

Գժգոյն գիշեր մ՝ էր քաղցրաբոյր աշնային,
Երկինքն աստղեր գերթ «սիրոյ վէրք» ցոլային,
Գեղնած ու չոր թերթից՝ լուսինն իւր բեկբեկ
Ճողքը ցօղէր ամբան վարսից աղերկ.
Ճամբերուն մէջ կը սողոսկէր ուղխ մ՝ անհետ,
Կայծեր՝ աստղեր կը խաղային ալեաց հետ,
Սիւգը խաղար տերեւներուն հետ թեթեւ,
Կը շոյէր գլուխս՝ այրած ճակատս վառէ թեւ,
Նա իւր շնչովն իս գոհ ընել կը կարծէր,
Բայց կ՝արծարծէր, ո՜հ, իմ սիրոյն բիւր կայծեր...
Ոգի մ՝ անցաւ սրտէս, թողուց հոն ըստուեր,
Ասեղց բոյլ մը... միայն գիտեն զայս աստղեր...
Համբոյրի մը յիշատակն էր սիւգին շունչ,
Իր դողդոջ ձայնն՝ տերեւներուն սա շշունչ,
Գունատ ճակտին տիտիկ պատկերն՝ այս լուսին...
Ո՜հ, կեանք պէտք է տալ՝ սիրտ տրուի թէ կուսին
Կը սիրէ նէ, նայուածքին մէջ կը թոռմի.
—Ո՜հ, ի՜նչ է նէ.—ձիւնով շաղուած մի անդրի,
Գսեմ ճակտին վրայ գոյգ մը աստղեր վառ՝
Եթէ սիրէ՝ հալի, թ՝ առէ՝ կըտրի սառ...
Լոկ հուր աչեր՝ ժըպիտ՝ արցունք տեսի նախ.
Ուրծս ուռուցիկ լանջ մը ըղգաց սիրտս նախ,
Սիրոյ մրմունջ՝ հառաչ լսեցի բեկբեկ խօսք,
Խոդոջ ու գիրգ՝ պաղ ձեռք մ՝ ըղգաց ձեռքս սոսկ,
Գիւերուս մէջ լոյս մը՝ հով մը մարեցաւ.
Չակ չէր նէ, այլ սէր՝ հուր՝ շունչ՝ ժըպիտ՝ ցաւ,

Գոհար աչեր՝ վարդ այտ, այլ ինքն էր թախիծ.
Այն գիսաւոր աստղէն «քար մը» մընաց ինձ...
Ցիշատակ մը՝ գերեզման մը... ս

ԹՐՋՈՒՀԻՆ.

Երեկոյ է, բոցավառ է հորիզոն,
Գառք մը կ'անցնի զազագի պէս յամբընթաց,
Գեղուհի մը ընկողմանած արոտի հոն,
Վերջալուսի աղջիկ մ' է սա, ով Աստուած.

Եթէ նայի,

Կ'ըսես.— «Հիմա կը մարի»:

Մեղրամոմէ անդրիանդի մ' է հանգոյն.
Ի՜նչ գալկահար... կարծես հաջագը վառէ.
Գաման մ' է նուրբ ներա վարդիցը դըժգոյն.
Աստուած ըզնէ զոյգ մ' աչերովն կը վառէ.

Եթէ ժըպտի,

Կ'ըսես.— «Ո՜հ, հիմա կ'անցնի»:

Նայել կ'ուզէ, բայց աւելի կը նուազի,
Սիրտը խունկի պէս կը մըխայ սիրտավառ,
Նէ շողերու՝ բոյրերու է թագուհի,
Խոնջ թիթեռնիկ մ' որ կը խնդրէ ծաղիկ թառ.

Եթէ շարժի,

Կ'ըսես.— «Հիմա կը թռչի»:

Լանջն է յուղեալ Ովկէանի մը նման.
Կ'ուզէ սիրել... համբոյրի մ' հետ նըւազիլ,
Մաշիլ, խամրիլ, խոնջած ընկնիլ գերեզման,
Քամել սիրոյ կրակէ բաժկին հուսկ կաթիլ.

Եթէ չիկնի,

Կ'ըսես.—«Հիմա կը բռնկի»։

Սրբոյ մեղո՞ւ, ինչպէս կոչեց Լամարթին,
Որուն ծրծած ծաղիկը՝ սիրտ, մեղրն է սէր,
Ես կը կոչեմ դնէ կոյս՝ որուն սիրտն է երկին
Անհուն սիրոյ, որ հորիզոն չունի դեռ.

Եթէ խօսի,

Կ'ըսես.—«Հիմա կը հառնի»։

Նէ կը վառի, մինչ կը վառի, չը հառնիր
Ցընանկ կընոջ՝ տաճարն վառած ճրագին պէս,
Ատղերու նման գիշեր սիրէ՝ փողփողիլ,
Կրակ մ'է փրթած կողէն սիրոյ բոցագէզ...

Իսկ թէ մեռնի,

Կ'ըսես.—«Հիմա կը ծնի»։

1871 թ.

Ն Է.

Վարդը գարնայնի
Թէ կուսին տիպար
Այտերուն շքլար՝
Ո՞վ յարգէր դանի։

Թէ չը նմանէր
Կապոյտն եթերաց

Գուսին աշերաց՝
Երկինք ոմ նայէր։

Թէ կոյսը չըլլար
Սիրուն ու ամբիծ,
Ճառուածն այն երկնից
Մարդ ուր կը կարդար։

1871 թ.

ՍԻՐԵՑԷՔ ՋՐԻՄԵՍՆԵՍ.

Վարդակարմիր գողգոթային վեհ գագաթ
Միշտ փալփլլող, սիրոյ անշէջ՝ ճառագայթ,
Դեռ կ'սպասես թափել արբանց քու սրլաք.
Զոմ կը հակես, վիհ եւ անդունդ, թէ կըմախք,
Որ սեւ ժայռից մէջ մարեցաւ այն բեկբեկ
Բարբառն վրանմ թէ «ըզմիմեանս սիրեցէք»։
Ցնանկին դամբանը կ'անհետի ոանակոխ,
Տրնակին մէջ մարի առկայծ կանթեղն հոգ,
Ցն մութին մէջ նոթի արդեկք կը հնծեն,
Դրդեակրն խրախ մինչեւ լոյս ջահք կը հիւծեն,
Հարուստին կառք ժխորով կ'անցնի արարշաւ,
Հէրին գագաղն իր գերեզմանն լուռ իջաւ...
Գեթսեմանին իջնող հրեշտակն գալիահար՝
Որ գեղ՝ ծաղիկ՝ արցունք ու փառք չը ճանչնար՝
Նորա ցուրտ գոգն ազքատը սոսկ կսփոփի,

ձոխն ու տրնանկ պատանքին մէջ կ'ելլան մի.
Կայծակնաթեւ թէ մրընչին մրրիկներ
Թէ «Սիրեցէք զիրար», հէքն հոս շնն սիրեր։

1869 թ.

ՆԵՐԱ ՀԵՏ.

Համբո՞յր մ' առի նեբանէ,
Համբո՞յր մ' անհուն զորովի,
Երբ կարմիր շողք մարէին
Հորիզոնին վերեւի։

Զեռքս տարաւ կուրծին՝ հոն
Սիրոյ երկին մ' որոտար,
Թոշնեցայ զիրկն ես իրեւ
Համբոյր մ' անհուն զալկահար։

Նէ զիս քով նբստեցուց
Գորգի վրայ դալարեայ,
Հուսկ ճաճանչ մը պլպլար
Նեբա դիմացը վրայ։

Թոթովեցի . . . զողացի . . .
Առի համբոյր անհամար,
«Խոսի՞նք». բսաւ. ո՞հ, խոսի՞լ.
Հաանիլ է լոկ ինձ համար։

Աշերու բոցն երբ մարի,
Դաղրի արտին երբ սրտին,

Լոկ այն ատեն հարկ է որ
Ընդօր շուրթերը խօսին։

Հուր հոբիզոնն մարեցաւ,
Երկինքն աստղեր փթթեցան,
Համբոյր մ' առի գարձեալ ես
Ցանուն աստեղց ցիր եւ ցան

Եէ թողուց որ վարսքն ազատ
Սիւզը դէպ յիս բերելով
Միշտ հովհարէ բրբընկած
Ճակատս զով բոյրերով։

Ո՜հ, այն ժամը ոսկեզօծ
Անշուշտ սահած, թրռած է
Ճակատագրին անողորմ
Սեւ ձեռքերէն երկաթէ։

Մեր համբոյրներն պահեցին
Տերեւներն խարշափմամբ,
Եւ շողերու արին շուք
Աստղերն երկնից այն անամպ։

Զեռք վերցուցինք աստղերուն,
Սէր ուխտեցինք իրարու,
Գողգրդացին աստղերն ալ
Մեր երդումէն անարկու։

Երանց երկինք մեր ջերմ ուխտ,
Աստղեր սրսկեց ի զորով,
Բնութիւնն եղաւ պրսակիչ,
Մեզ պրսակեց աստղերով...

1871 թ.

ԱՌ ԿՈՅՍԸ*).

Ո՜հ, մինչ ցերը, ըսէ, ո՛ կոյս, հոգիս ըլլայ գեղոյդ գերի,
Եւ մինչեւ ցերը թրթռան ոգիք ցաւած սրտիս եւ քնարի,
Լոկ համբուրիկ մ՚ ուզեցի քաղել այտէդ մէկ թարմ վարդ,
Ճառագայթ մը խընդրեցի աչերէդ երկնագրաւարթ.
Զբլացար դու, անգութ, վարդ մը գրժգոյն ճակտիս,
Եւ ճառագայթ մ՚ այն անդունդին խոր սրտիս.
Ո՛չ, ես չեմ կրնար ապրիլ դուրկ գրկէդ,
Ծիծառնիկն ապրի դուրս բոյնէն գէթ.
Ցրտամաղար քնարըս զարնեմ ջախջախ,
Գոցեմ սիրտս սիրտաբախ . . . .
Մնայք բարով, կոյս եւ քնար.
Կուսին տեղ լաց, քար,
Ճակատս նրսեմ
Հանդչեցընեմ
Մաշող
Հոգ։

ԿՈՅՍԸ ԼՔԵԱԼ.

Հալեց սառեր զարնան արեւ,
Ոսկի մատամբք ծաղիկ՝ տերեւ
Ցանեց, ցրուեց ամպ ու բալ փոյթ,
Պարզեց սառեցդ կամարն կապոյտ։

*) Իրաքանչիւր տող յաջորդից մէկ վանկ աւելի չափով։

Ո՜հ, ինչու կուսին
Նայուածքն է մթին։

Ոսկի սրփռեց լեռանցն արփի,
Ծիծաղեցաւ լուսինն յալի,
Կայծ ու ծիծաղ, ծաղիկն համբուն,
Թերթեր՝ ուր սէր կարդայ զուարթուն,

Ո՜հ, ինչու զունատ
Է կուսին ճակատ։

Բուլբուլն թառեր թաւուտ թրփին՝
Գեղգեղէ գե՛ղ աղեօր սրրտին.
Թրռչունք մրթին անտառաց խոր
Զայնակցին, հեշտ սիրոյ ժրխո՛ր. . .

Ո՜հ, ինչու լինի
Լուռ՝ կոյս լեզուանի։

Ալիք սիրոյ ցոյց տան ձայն՝ նեռ,
Մրրմունջ՝ նայուածք տանելով հետ,
Ջրրել կ'երթան ծաղկոտ մարմանդ,
Թօթվէ խոտէն հուշն ազամանդ։

Ո՜հ, ինչու արտասուք
Թափէ կոյսն ի սուգ։

Ի դրանց ոսկի արեւելքին՝
Թրռչրտելով սիւգեր հեշտին՝
Ծաղկանց՝ ալեաց՝ թերթից համբոյր
Տալով սահին թողլով համ՝ բոյր.

Ո՜հ, ինչու հառաչ
Հանէ կուսին լանջ։

Ո՜ կոյս, ինչու այսպէս տրրտում
Սամոյը հոպոպք արտասուաթուրմ,
Դէմքդդ սիրուն ծածկէն, վերցուր
ճակատդ, շընչէ սէր, լոյս ու բոյր.

Անկողինդ՝ ծաղկունք,
Սաղեր՝ քեզի շուք։

—Սիրէի ես սաղերն երկնի,
Ալին գիս ցոյց տար գեղանի,
Փայլէր ծաղիկ ճակտիս անուշ,
Զեփիւռն ունէր հեշտ փսփրուշ՝

Մառնելու գկուսիկ,
Հրապո՛յրք խաբուսիկ։

1870 թ.

ԵԱՅՈՒԱԾՔՄԸ.

Ամրան տապէն ես խոնջած՝
Թաւուտքի մը բիւր բիւր կայծ
Տերևներուն շուքն ինկած՝
Որչափ սիրեմ շունչն հովտաց՝

Մեղմիկ
Հովմիկ։

Արշալուսին կանուխկեկ՝
Ո՜րչափ սիրեմ՝ ոտքս մերկ

Գոխելով մարդ ծաղկանիկ՝
Լրացուելու գանել մէկ

Յրատակ
Վրատակ։

Երբ միայնակ ես գամ ման,
Ո՞րչափ սիրեմ կրակներս մերկ՝
Ներշընչելու սէրս անձայն՝
Հառաչելու կուսի նման

Քաղցրիկ
Ծաղիկ։

Երբ հոմանի աստղաղարդ
Ըլլայ երկնից գմբեթարդ,
Ո՞րչափ սիրեմ՝ ի սաղարթս,
Երբ կը հիւսէ երգ ի վարդ

Թրթռակ
Սոխակ։

Բայց զասանք չեմ փոխեր բնաւ
Մէկ նայուածքին հետ անբաւ՝
Թէ յուղարկէ ինձ հեշտաւ
Իր աչերէն վառ ու սեաւ

Լուսիկ
Կուսիկ։

1871 թ.

ԴՐԱԵԼ.

Փունջ մը կնճիռ՝ բոյլ մը կայծակ՝
Դրժոխք մ՝ անէծք խոցեց հոգեակս։

Ես ուզեցի պաշտել ըզնէ,
Սիրել ժըպիտքն՝ փըթիթք անհուն,
Սիրել ատաղերն սեւ աչերուն,
Եւ այն խոկումն, որ մըթագնէ
Պայծառ ճակատն՝ այն ամպըն է,
Որ կը շպարէ գէմքը լուսնոյն։

Գիշեր մը սուգ անդունդ մ՝ հառաչ
Ցուզեց ներա հոգին ու լանջ։

Ես ուզեցի միշտ քովն ըլլալ,
Մրափկ ընել թընդիւն սրտին,
Ջնջել՝ խրմել ներա հոգին,
Եւ շոշափել լոկ ձիւնափայլ
Ծոծորակին վրայ ծալ ծալ
Թափող վարսից ալեակքն ծըփին։

Ովկէան մը արբտունջ լսեցի.
«Ձիս կը նեղնս» հրծծեց ինծի։

Ես ուզեցի քընար մ՝ ըլլալ
Ներա ձեռքին տակ հեռացող,
Ներա հոգւոյն խորն հիացող
Թեթեւ պատկեր մ՝ ըլլալ շարժեալ,
Մոռնալ զիս, լոկ ըզնէ խոկալ՝
Կ՝ վառէ երազ մ՝ որուն մէկ շող։

Ամպրոպ մը սաստ ցընցեց հոգիս,
Գոչեց.—«Սիրել չե՞ս կրնար դիս»։

Ի զո՞ւր սիրաբս մբխաց առջին՝
Խընկարկելու սիրան անապատ,
Ցուցի իրեն ճակատս գունատ,
Կուրծքս գոգած՝ մառն իմ աչքին,
Ի զո՞ւր շուրթերս դողդոջացին,
Զինքը սիրելս հրծծեցին յայտ։

Եվ հեռացաւ ինձնէ, ըսաւ.
—«Բա՛ւ սիրեցի քեզ, մնաս բարեա՛»։

Որոտացին խոկմանցս ամպեր,
Կայծակնահար ըրին հոգիս,
Մոխիր դարձան երազներս յիս,
Ճակատագիրս խնծդաց 'ի վեր.
Խորշ մը կար, որ դիս չէր ծաղրէր,—
Այն՝ լուռ փոսն էր գերեզմանիս ...։

Փունջ մը կնճիռ՝ բոյլ մը կայծակ՝
Դրժոխք մ' անէծք խոցեց հոգեակս։

1871 թ.

ՉՆԷ ՊԵՏՔ ՏԵՍ.

Ճառագայթի ու վարդի
Փրթթումներով վեհապանծ
Ես չը սիրեմ սա դէմքը՝
Սիրոյ ժպտով մը օծած։

Ես չը սիրեմ՝ երբ կուսի
Մ՝ աչերը դիս բուրվառեն՝
Զերթ հուր ամպոց գոյգ մը հիւս
Ցօնիցը տակ մեղմորէն։

Գիտասդի պէս հերարձակ՝
Ես չը սիրեմ սա վրճիտ
Կոյսն, ոյր դէմքէն կը փթթին
Լուսնի դալուկն ու ժպիտ։

Ես չը սիրեմ՝ հանդիպիմ
Երբ կուսի մը հեզանազ,
Որ եղեմ մը կը բուրէ,
Վառէ երկինք մը երազ։

Ես չը սիրեմ սա կապոյտ
Զոյգ մ՝ երկիններն դինովցած՝
Ոյր մէկուն մէջ պաշտի նա
Եւ միւսին մէջ ալ Աստուած։

Ես չը սիրեմ սա օտար
Ժրպիտները յուսաշոգ՝
Որք ծաղիկներ են սուտ սոսկ
Սրբոյ անդունդը ծածկող։

Ես կը պաշտեմ զիմ Գ...*)
Ինձ կը բաւէ իր սրբոյն
Մէկ ճառագայթը միայն
Եւ մէկ վարդը իր ժպտին։

Թէեւ սեւ աչքն հեղեղեն
Անթիւ ասահոց միշտ բոյլեր՝

---

*) Ոմանք կարծում են Գիսասու։

Իր սեւ յօնից շուքին տակ՝
Զորս ութ օրն է նա գրծեր։

Լուսինը ոչ նեղա վարան՝
Եւ ոչ ալ վարդը ունի
ճառագայթումը նեղա.
ճառագայթո՛ւմ սիրոգի։

Ես դողդողամ իր վրայ,
Նէ իմ վրայ դոբովի,
Իսկ թէ մոռնայ դիս օր մը...
Ա՜հ, այն օրը քա՜ր կըտրի...։

1871 թ.

ՍԵ՛Ի ՍԵ՛Ի.

Երբեմն հոգիս ասպդի մը բոց
Եւ թիթեռնի մ՝ ունէր թեւեր.
Ալիջալուսի նրման ամպոց
Երազնե՛ր, հո՛ւր ճակատս վառէր։

Երդ սառոյցներ դառն արտասրի
Կը քարանան կուրծիս ներքեւ,
Եւ բարդը ամպոց սեւաթորմի
Կ՝ ուզեն խեղդել սիրտս եւ արեւ։

Հազիւ քանի մ՝ օրերն կեանքիս
Ոսկեզօծեց իմ բաղդը վատ՝

Որոնք եղան լոկ Ովասիս
Մեղմով՝ կեանքիս դառն անապատ։

Մենանոցի օրեր ցրվեցջ,
Երբեմն՝ հոգոյ ծաղկանց 'երկնի
Զիւնափրթիթ ամպերուն մէջ
Կեանքիս մբրուրն ես թափէի։

Ծրծէի սէր, ծրծէի կեանք՝
Մինչ վերջալոյսն կը հրահրէր՝
«Մնաս բարով» ի սա կարմրորակ,
Ցրխուր կրակ 'երկնի բոցեր։

Ունէի ես երբեմն առատ
Վարդեր՝ առատ ասողեր նոյնպէս.
Ճակատագիրս սեւ տեսաւ շատ,
Բրցուց, քաղեց զանոնք սրբաէս։

Ունէի ես իմ սիրուհին,
Որոյ թէպէտ աչքն էին սեւ,
Սակայն սրգալ շրգիտէին...
Հրեշտակ մ' էր նէ, հրեշտակ անթեւ։

Սեւ երազ մը օր մը գողցոջ
Մրցեց զիս սեւ փոսի մ' առջին,
Ուր քար կրտրած՝ սիրտ ի թրնդոջ՝
Դագաղի մ' աչքս յառած էին.

Ուաղ, ներա վարդքն ու ասողերն
Լուռ՝ պիտի տար կուլ այն սեւ փոս.
Ցուրտ համբոյր մը առի ճակտէն.
Ներա վերջին ձոնն էր, ափսոս։

Եւ լրսեցի յայնժամ՝ թի թի,
Սեւ սեւ հողեր կոշդ թնդեցին,
Տրխուր քոդրին վրայ փայտի...
Դրժոխք մ՝ անէծք այն սեւ օրին։

Այն ցուրտ հողերն յիմ դատարկ սիրտ
Լրցուցին՝ փոսն գոցելնուն հետ,
Եւ այս աշխարհն ալ անժբաիտ
Գոցեցին իմ առջեւ յաւէտ...։

1871 թ.

ԿՈԿՈՆ-ԾԱՂԻԿԸ ԿՈՒՍԻՆ.

Լուսափրթիթ 'ւ անարեւ
Զոյգ մ՝ աշխարհներ ես տեսի
Ճառագայթից 'բոյրերու
Եւ փափկութեան ու լոյսի

Ո՛հ, չէ նոցա պէս ամբիծ
Իտալական վեհ երկին,
Եթէ չունին առանց բոյլ,
Ամպ ու կայծակ ալ չունին։

Ո՛հ, յաւիտեան միշտ կոկոն
Պարծես զոյգ մը ծաղիկ են,
Բայց նրման կոյս սրբուներու՝
Պարի քաղցրը կը բուրեն։

Զնոք կարկառել աշխարհաց
Ակնախրատիպ ու անտես՝

Ցանդուգն ըլլալ է լոկ քան
Զաշխարհակալն Ալեքսանդր։

Ինչպէս արդեօք կերտեց նա
Լուսազունաններս այս դողդոջ,
Նա աշխարհի քան ըզկերտ
Մատածեց ոգի տալն կընոջ։

Կը դողդողան իմ շուրթերը
Հըպիլ սիրոյ այդ խըռով
Գոկան-ծաղկանց՝ խամբելու,
Ալեքսանդրու երկիւղով։

Այլ որ շուրթըն յանդգնի
Հըպիլ հրաշից այդ լուսէ,
Կերդնում յաշխարհն ասանդաց
Թէ նա դար մը կը ծըծէ։

1871 թ.

Ի ԳԵՐԵԶՄԱՆ

ԵՄԵՆԵՍԻՐԵԼԻՈՑ ՎԸՐԳԸՆ ԼՈՒԹՓԵԸՆԻ ՀԵՅԵԹՄՈՒՆԻ

Ո՜հ, երկընքի ժապաւէններ՝
Ճառագայթներ՝ միացուցած
Էին սըրտերը մեր միմեանց՝
Մեր սըրտերը սիրանըւէր։

Նոքա միմեանցս համար քանի՜
Էին անհա՜ւն բաց մատեաններ,

Հոն ամեն բառ խորք մը ունէր
Իր ներքեւը սիրոյ, ցաւի։

Ո՜հ, կը յիշեմ, Զամլըճայի
Սարը նըստած լուռ մըխայինք,
Ուր շուք տային մեզի նոճիք՝
Սեւ հովանոցք վըշտահարի։

Ըսթամպօլի կապոյտ գօտւոյն՝
Վոսփորի ծուփը դիտէինք,
Ուսկից եւ մերթ զանամպ երկինք,
Ո՜ ախորժներ լուռ մեր հոգւոյն։

Այն հիւսկէններըն երկընքին՝
Այն ամպերը ձիւնաթորմի՝
Մինչ երեկոյ, ո՜հ, մի առ մի
Մեր նայուածքը գըրաւէին։

Չէինք խօսեր, խօսքն մեր հոգւոց
Անհունութիւնը կը պըղծէր.
Մենք գերթ երկու գըժգոյն բոցեր
Իրարու մէջ կ՚այրէինք սոսկ։

Մեր հոգիքը նոճիներու
Թուխ թիթեռներ էին տըրտում,
Սե՛ւ ծըծէինք, սո՛ւգ անհաանում,
Նայէինք միշտ երկրէս հեռու։

Անյուսութի՜ւն, գերեզմանի
Այդ սեւ կաթը շա՜տ ըմպեցինք.
Քեզ յափրեցուց այդ ըմպելիք,
Եղար երկնից տըժգոյն որդի։

Քու գալուկըդ դիս ցաւցուց շատ,
Եւ նայուածքըդ վերջին նըւաղ,
Զոր ուղղեցիր ինծի, աւա՜ղ,
Բեւեռեցուց յիս յիշատակդ։

Երջանիկ ես հոգ թէ թշուառ,
Զուարթնոյ թեւով լուր մ' ինձ դըրկէ.
Ա՜հ, այս աշխարհս միշտ տաղտա՜ւկ է...
Ցաւերու մեծ մայր մ' է աշխարհ։

Ո՜հ, եթէ հոգ ծառի մը շուք
Կայ, եւ նորա քով մէկ վրտակ,
Եթէ կայ հոգ սէր անապակ,
Կայ աղատ օդ, աղատութիւն,

Ո՜հ, կը թօթվեմ ես այս աղտոտ
Զորձն հոգւոյս՝ կեանքս՝ մինչ իսկ այսօր,
Հոգ կը հաղնիմ, հո՜գ սրգաւոր...
—Ա՜հ, ուղածներս, Վարդան, կան հոգ...

1871 թ.

Հ Ա Ա Ի Ի Ն Ք.

Երբոր վարդի փունջը հայեցի
Երլան դրժգոյն ճակտիդ վերեւ,
Խոնարհեցիր աչերդ արեւ,
Քեզ այն օրէն ես սիրեցի։

Թերթեր յուզող սիւդի մը պէս
Թրռար 'սրտիս ծալքերն թօթվել,
Քընարի մը կրակէ թել՝
Քեզ ձրգեցիր դու աղիքէս։

Երդ կը փախչիս ինձմէ սիւդի
Պէս, շուքդդ ասա լոկ քընարիս,
Գիսաստղի պէս հեռուն կ' նաղիս՝
Հովին տրւած մաղերդ ոսկի։

Երբ ասաղալոյց գիշեր է զով,
Ընջաղայիս Պաղլար-Պաշի,
Գիտես թէ սիրտս որչափ մաշի՝
Ընջաղգեսաիդ լոկ շրշիւնով։

Թայ սիւդն ազատ քեզ այցելու,
Նային քեզի ասաղերն ազատ,
Ըստուերին մէջ մինակ ու զատ,
Ես կը դողամ քեզ մօտելու։

Ո՜հ, թող երթայ սիւդն իր ծաղկոց,
Նային ասաեղք թող յՈվկէան,
Եւ թող մէկ մ' ես ալ դալկանամ
Քու նայուածքիդ մէջ կրակուրոց։

Մահիկն երբոր շառագունած
Իջնէ լեռնէն ի հորիզոն,
Ալ կ' անհետիս, չես շրջիր հոն՝
Կաղին՝ հովին՝ ասաղին դիմաց։

Գերեզմաննոցին ցուրտ ծառեր
Կը փրսփրսան մեռելոց հետ,
Ըրջագնատիդ շրշունին գէթ
Ինձ արձագանք՝ մահահրաւէր։

Նրւագած են լոյս ու ժրխոր,
Դադրած շրշունք կանանց անմեռունչ
Արդ կը թաղուին համբոյր՝ մրմունջ՝
Ասեղագարդ անդունդին խոր։

Ըրջագնատիդ խրշրտուքն յար
Կը փրսփրսայ դեռ ականջիս,
Հեծկլտալով իջնէ հոգիս
Արտօսրալից անդունդ մ' ի վար...

1871 թ.

Զ Օ Ն Ի Կ Ք.

Մինակ էր.
Վարդ մ՝ ըզգօն
Մատուցի
Ներա ձօն։

Զիկնեցաւ
Նէ զբաւթ՝
Կ՝ ընդունէր
Երբ իմ վարդ։

Ներա քով
Վարդն որչափ
Էր անշուք՝
Գունաթափ,

Նոյնպէս ձօնս
Համբոյրին՝
Զոր տբաւ,
Չէր բնաւ զին։

1871 թ.

ՆՈՒԷՐ ՑԻԶԱՏԱԿԻ

ԸՆ Պ. Ց. ՃԱՆՓԷՍՃԵԱՆ.

Ցուշք

Սա կապոյտ մայր-ովկէանին,
Ուր փոզփոզեն աւազք ոսկի,
Մեր երազոց վառարանին
Եղբէն՝ վարդից մէջ աճիւնի՝
Երբ արեւը շողշողէ,
Դու իմ սէրը միշտ յիշէ։

Թաւուտքէ մը կանաչ ու մոր՝
Որոց շուքը սիրէինք միշտ,
Նստիլ՝ խօսիլ շրթամբք զոդզոջ՝
Ծրծել անյաղ իրարու սիրտ՝
Երբ տերեւ մը խարշափէ,
Դու իմ մրմունջը յիշէ։

Ընաւօտներն գարնանային՝
Ո՜հ, հորիզոնն ալ վարդավառ՝
Ցայց ելնելուդ ծաղկած մարգին՝
Ուր կը զրանես մոր, շոր մացառ՝
Երբ թրռչնիկ մը ճրռուողէ,
Դու իմ իղձերը յիշէ։

Պաղլար-Պաշի եղած ատեն՝
Եւ կամ սարը Զամլըճային՝

Սիրուն վայրեր, ուր միշտ արդէն
Ձեմել հոգիք մեր սիրէին՝
Երբ որ գնփիւռ մը փրշէ՝
Դու իմ հոգին միշտ յիշէ։

Եւ առօրեայ աշխատանքէ
Վատակարեկ վերադարձիդ՝
Եւ կամ սիրոյ արշաւանքէ
Դարձած ատեն արուէ՛ի սիրտ՝
Երբ հորիզոնն հրդեհէ,
Դու իմ կրակները յիշէ։

Ամրան գիշեր մը երբ գտնես
Առագերն առատ զխուդ վերայ՝
Եւ լուսինը լապտեր ընես՝
Դողդոջ քայլից դէպ՝ի Մօտայ՝
Երբ շրջագիսատ մը շրջէ,
Իմ մաշած սիրտը յիշէ։

Ցերտում նստած դու պատուհան՝
Ցառած երկնից այն սեւերես՝
Սեւ մտածմանց լոկ վառարան՝
Ցրժգոյն ճակատդ եւ աչերդ վէս՝
Ցրխուր կոչնակ մ՝ երբ հնչէ,
Մբտերմիդ մահը յիշէ։

6 Հոկտեմբեր 1871 թ.

ՏՐՏՈՒՆՋՔ.

Է՜, մընաք բարով, Աստուած եւ արեւ՝
Որ կը պրկպրկաք իմ հոգւոյս վերեւ...
Աստղ մ՚ ալ ես կ՚ երթամ յաւելուլ երկնից,
Աստղերն ինչ են որ, եթէ ոչ ամրիծ
Եւ թրշուառ ոգւոց անէծք ողբագին,
Որք թրուին այրել ճակատն երկնքին.
Այլ այն Աստուծոյն՝ շանթերո՜ւ արմատ՝
Ցաւելուն զէնքերն ու զարդերն հրրատ...:
Այլ, ո՜հ, ի՞նչ կըսեմ... շանթահարէ զիս,
Աստուած, խոկն հսկայ փշրէ հիւլէիս՝
Որ ժպրհի ձգտիլ՝ սուղիլ խորն երկնի,
Ելնել աստղերու սանդուխքն անալի...
Ողջո՜յն քեզ, Աստուած զողղոջ էակին,
Ջոդին, փրթիթին, ալւոյն ու վանկին,
Դու, որ ճակտիս վարդն ու բոցն աչերուս
Խրլեցիր՝ թրթռումս շրթանց՝ թռիչն հոգւոյս,
Ամպ տրւիր աչացս, հեւք տրւեր սրրտիս,
Ըսիր մահուան զուռն ինձ պիտի ժրպտիս,
Անշուշտ ինձ կեանք մը պահած ես հաքի,
Կեանք մ՚ անհուն շողի՝ բոյրի՝ ազօթքի.
Իսկ թէ կորնչի պիտի իմ հուսկ շունչ
Հոս մաաախուղի մէջ համբ անշրշունչ,
Այժմէն թող որ շանթ մ՚ ըլլամ դալկահար,
Պրլլուիմ անուանդ, մռնչեմ անդադար,
Թող անէծք մ՚ ըլլամ ու կողրդ խրրիմ,
Թող յորջորջեմ քեզ «Աստուած ոխերիմ»։

Ո՜հ, կը դողդոջե՛մ, դժգոյն եմ, դժգո՜յն,
Փլրփլրի նեբսբս դրժոխքի մ' հանգոյն...
Հաւաչ մ' եմ հնծող նոճերու մէջ սեւ,
Թափելու մօտ չոր աշնան մէկ տերեւ...
Ո՜հ, կայծ տբուէք ինձ, կայծ տբուէք, ապրի՛մ...
Ի՜նչ, երազէ վերջ զբրկել ցուրտ շիրի՛մ...
Այս ճակատագիր ի՜նչ սեւ է, Աստուած,
Երդեօք դամբանի մրուրով է գրծուած...
Ո՜հ, աւէք հոգւոյս կրակի մը կաթիլ,
Սիրե՛լ կ' ուզեմ դեռ 'ւ ապրիլ ու ապրիլ...
Երկնքի աստղեր, հոգւոյս մէջ ընկէք,
Կայծ աւէք, կեանք՝ ձեր սիրահարին հէք:
Գարունն ա՛չ մէկ վարդ ճակտիս դալկահար,
Ո՛չ երկնի շողերն ժբպիտ մ' ինձ չ' են տար.
Գիշերն միշտ գագաղս, աստղերը ջահեր,
Լուսինն յար կուլայ խուզարկէ վրհեր.
Կրլան մարդիկ, որ լացող մը չունին,
Ընոր համար նա դրբաւ այդ լուսին.
Եւ մահամերձն ալ կուզէ երկու բան.
Նախ կեանքը, վերջը լացող մ' իր վրան:
Ի զո՞ւր գրբեցին աստղերն ինձի «սէր».
Եւ ի զո՞ւր ուսոյց բուլբուլն ինձ «սիրել»,
Ի զո՞ւր սիւգեր «սէր» ինձ ներշնչեցին,
Եւ դիս նորատի ցուցուց ջինջ ալին,
Ի զո՞ւր թաւուտքներ լրեցին իմ շուրջ,
Գաղանապահ տերեւք չառին երբէք շունչ,
Որ չը խրոովեն... երազբրս վրսեմ
Թոյլ տբւին, որ միշտ ըզնէ երազեմ,

Եւ 'ի զո՞ւր ծաղկունք, փրթիթներ գարնան՝
Միշտ խնկարկեցին խոկմանց խորան...
Ո՜հ, նոքա ամենքը դիս ծաղրեր են...
Ասուծոյ ծաղրն է աշխարհն ալ արդէն...

1871 թ.

Զ Ղ Զ Ո Ի Մ.

(Օր մը վերջը)

Երէկ երբ պաղ քրտանց մէջ
Սեւ մրրափ մը կառնէի,
Եւ թոշնած զոյգ մը վարդեր
Այտերուս վրայ կայրէին,

Անշուշտ ճակտիս վրայ մահու
Դալկութիւն մը կը պրլպլար,
Եւ մահու թռիչ մ' ունէի.
Լրտեցի մօրս հեծեծում...

Բացի աչերրս խոնջած,
Մօրրս արտասրրն տեսի՜...
Ո՜հ, ճշմարիտ զորովի
Մարգարիտներ լոյծ ու կեղծ...

Մայրս անհուն ցաւ մ' ունէր,
Այն սեւ ցաւը ես էի...
Ա՜հ, գրլուխս փոթորկեց,
Այն սեւ հեղեղն տրուի դուրս։

Ո՜հ, ներէ՛ ինձ, Աստուած իմ,
Որքա՛ն արտասրը տեսի...

1871 թ.

Ի՞Մ ՄԱՀԸ*).

Եթէ դժգոյն մահու հրեշտակ
Հանուն ժպտով մ' իջնէ իմ դէմ,
Հոգիանան ցաւս ու հոգիս,
Գիտցէք, որ դեռ կենդանի եմ։

Եթէ սրնարքս իմ տիպար
Մամ մը վրտիտ ու մահագէմ,
Ո՜հ, նրշուլէ ցուրտ ճառագայթ,
Գիտցէք, որ դեռ կենդանի եմ։

Եթէ ճակտովս արտասրաղած
Ջիս պատանի մէջ ցուրտ դերթ վէմ
Փաթթեն, դրնեն սեւ դագաղը,
Գիտցէք, որ դեռ կենդանի եմ։

---

*) Գրքում երգում է առանձին եղանակով։

Եթէ հընչէ արխուր կոչնակ,
Թրթռուն ծիծաղն մահու դժխեմ,
Դագաղս առնէ իր յամբ քայլ,
Գիտցէք, որ դեռ կենդանի եմ։

Եթէ մարդիկ այն մահերգակ,
Որք սեւ ունին ու խոժոռ դէմ՝
Համասրտեան խունկ ու աղօթք,
Գիտցէք, որ դեռ կենդանի եմ։

Եթ՝ յարդարեն իմ հողակոյտ,
Եւ հեծեծմամբ ու սրգալէն
Իմ սիրելիքը բաժնուին,
Գիտցէք, որ մի՛շտ կենդանի եմ։

Իսկ աննըշան եթէ մընայ
Երկրի մէկ խորշն հողակոյտն իմ,
Եւ յիշատակս ալ թառամի,
Ա՜հ, այն ատեն ես կը մեռնիմ։

1871 թ.

Ի՞ՆՉ ԿԸՍԵՆ.

Ինձի կըսեն.—«Ի՞նչու լուռ ես»։—
«Ո՜հ, միթէ բառ կամ խօսք ունի՞
Աբշալոյսը, որ կը բռնկի.
Չի անհուն է այն ալ ինձ պէս»։

Ինձի կըսեն.—«Միշտ տրխուր ես».—
Ի՞նչպէս չըլլամ, մէկիկ մէկիկ
Թօթափեցան գլխուս ասդիկը...
«Աբշալոյս մը չանցա՜ւ սրրտէս»։

Ինձի կըսեն.—«Կըրակոտ չես,
Ըրնակի մը պէս ես մեռած,
Դալկահար՝ դէմքդ ու հայեցուած».—
«Ո՜հ, յատակն են իմ փրփուրներ»։

Ես ինձ կըսեմ.—«Ժամդ է հասեր,
Քու երկրորդ սեւ մօրդ գընա գոգ,
Գերեզման, հոն գտնես դու գոգ,
Վարդեր՝ թրթռում՝ թռիչ ու ասդեր...»

1871 թ.

ԻՄ ՀԱՆԳԻՍՏԸ.

Եթէ մօտի հողակոյտիս,
Թուխ մոխրագոյն 'ւ աշխր նեղտ՝
Թէ ջուխտ մարգրիտ թափեն իմ վրայ,
Զը ցաւագնիր ոսկերատիս։

Այս իմ հանգիստ՝
Իմ լրանիստ,
Այս օթեւան
Խաղաղութեան։

1871 թ.

ԻՄ ՑԱՒԸ.

Սուրբ տենչերով լոկ ծարաւած՝
Ցամաք դրտնել աղբերքն յամայր,
Ցամքիլ ծաղիկ հասակի մէջ.
Ո՜հ, չէ այնչափ ցաւ ինձ համար։

Ջերմ համբոյրով մը դեռ չմյրած՝
Սա ցուրտ ճակատս դալկահար՝
Հանգչեցունել հողէ բարձին.
Ո՜հ, չէ այնչափ ցաւ ինձ համար։

Դեռ չը գրկած էակ փունջ մը
Ժպտէ, գեղէ, հուրէ շաղեալ՝
Գրկել սա ցուրտ հողակոյտը.
Ո՜հ, չէ այնչափ ցաւ ինձ համար։

Քաղցը երազով մ՚ յրդի մրափ
Զանգորրած գլուխս մբրբկահար՝
Ննջել հողէ վերմակի տակ.
Ո՜հ, չէ այնչափ ցաւ ինձ համար։

Հադնիլ հիւղին մուր-անունը,
Ծրծել նորա մբրուր-օդն յար,
Միշտ ցաւիլը միանգամայն,
Ո՜հ, չէ այնչափ ցաւ ինձ համար։

Էջ մարդկութեան մէկ ոսոր գոս՝
Հայրենիք մը ունիմ թշուառ,
Զօդնած անոր՝ մեռնի՛լ աննշան,
Ո՜հ, այս է սոսկ ցաւ ինձ համար։

1871 թ.

ՅԱՒԵԼՈՒԱԾ.

Յաջորդ յաւելուածի մէջ կը դնենք Դուրեանի նախնական տարիների եւ անցեալ դարաւորմնները, նաեւ նախորդներից մի քանիսի սեռագրութիւնները, որ գտնուել են Պետրոս Դուրեանի թղթերի մէջ:

ԳՈՒՐԵՂՆԻ ԵՐԵՔԻՆ ԱՏԵՆԱԻՈՐԸ

(գրուած 13 տարեկան հասակին)

*
* *

Գարնանային կենացըս մէջ
Սիրոյ ծաղկունք մինչ փթթէին,
Սիրաս վառուած սիրոմն անչէջ
Ճաքինուոյն եւ գեղեցկին,

Մանագուշակ խորշակն անդէն
Հասաւ սիրեց սրտիս բոլոր,
Թառամեցան ծաղկունք ամեն,
Ծրլած փթթան սրտիս մէջ նոր։

Այն որ տուաւ երկրիս գարուն,
Ծաղկունք, մարգերն ալ դարդ նորին
Եւ մարդկային վեհ սրտերուն
Ուսոյց սիրել գեղն ու բարին,

Ինչո՞ւ արդեօք խորշակահատ
Կ՚ընէ ծաղկունք գեռափրթիթ,
Ինչո՞ւ արդեօք նա սիրահար
Սրտերն տեղու արտասուօք միշտ։

Ահա կ՚իմնեմ ահ ես այժմէն
Ընչեւս բացուած գերեզման խոր,
Բայց սա տխուր տեսարանէն
Ինչ կայ արդեօք հաճոյք մ՚ Անոր։

1864 թ.

(*Սեսագրութիւն* «ՊԷՏՔ Ի ՄԵՌՆԻԼ»-*ի*).

Աշնան դժգոյն գիշեր մըն էր ձմրահուպ,
Կը ցոլային երկինքն աստղեր բիւր՝ ասուպ,
Զոր թերթերուն խորերն լուսինն իր բեկ բեկ,
Ջաղն կը ցողէր՝ ամրան վարսիցն աղէրեկ.
Ջամբին մէջ թարմ կը թաւալէր վրտակը,
Փաղփուն աստղեր կը շողային յատակը,
Ի անոր ալեացն հեշտիկ մրմունջը միայն
Սիրոյ քնարին վերջին լարին էր ողբ՝ ձայն...
Սիւքը կ՚սուլէր տերեւներուն մէջ թեթեւ,
Դէմքիս վրայ կը սահեցնէր շղարշէ թեւ,
Նա իր շնչովն գիս գոհ ընել կը կարծէր,
Բայց կարծարծէր սրտիս սիրոյն վառ կայծեր:
Ոգի մ՚ անցաւ սրբատէս, չ՚ թողուց հոն ըստուերն՝
Ցիշատակ մը... միայն գիտեն այս աստղերն...
Համբուրից տխուր յիշատակ մ՚ էր սիւգին շունչն.
Իր դողդոջ ձայն տերեւներուն այս շրշունչն.
Ընոյշ ժըպիտն ու վեհ նայուածքն այս ալին,
Մեռաքս վարսերն սեւ հողին տակ կը հալին...
Դրժգոյն ճակտին տրխուր պատկերն այս լուսին,
Ո՜հ, կեանք ալէտք է տալ՝ սիրտ տրուի թէ կուսին...
Կը սիրէ նա նայուածքիդ մէջ կը թաքնի...
Ոխի մէջ՝ քաջ, սիրոյ մէջ՝ վարդ՝ սիրտ մ՚ ունի...
Ընոյշ աչեր՝ ժըպիտ՝ արցունք՝ տեսայ լոկ,
Գուրծքս վարսեր լանջ մը զգաց սիրտարբուկ.
Սիրոյ մրմունջ՝ հառաչ լսեցի բեկբեկ խօսք,
Դողդոջ ու դիրդ պաղ ձեռք մ՚ ըզգաց ձեռքիս տակ,

Թեւերուս մէջ լոյս մը՝ հով մը մարեցաւ...
Էակ չէր նա, այլ սէր՝ հուր՝ շունչ՝ ժըպիտ՝ ցաւ...
Ըսուեր մ՝ էր նա՝ որ սահեցաւ դեղեր թախիծ,
Բայց կանգ առաւ՝ փոս մը՝ քար մը ցըցուց ինձ՝
Ցիշատակ մը՝ գեղեցման մը՝ սուրբ սափոր...
Ուր կը յածի հեկեկով սիրոս ցօղաթոր...:
Երանի թէ ըլլամ ես շիթ մ՝ արտասուք՝
Եւ կամ թէ խոտ մ՝ ըլլամ ու հոն ես ցամքիմ...
Ո՜հ, կեանք պէտք է տալ՝ սիրտ տրրուի թէ կուսին...
Դարեր անցնին, շուքըդ պիտի չը մեռնի,
Ըցունքներով կեանքըս պիտի ուշ թոռմի,
Ձիրմիդ վարդերն դեռ չը թօշնած գըրկեմ քեզ,
«Կեանք կուտաս, սիրտ թէ տաս» ըսին եռեւէս...

10 Օգոստոս 1869 թ.

ՄՆԱՑ ԲԱՐԵՍԻ.

(*Սեւագրութիւն* «ՍԻՐԵՑԻ ՔԵՉ»-ի).

Ռատու մը դեռ մրթնշաղ՝
Կը ծաւալէր շող ու շաղ,
Ծաղկանց մէջ քեզ տեսայ ես,
Կը ժըպտէիր լուսնոյ պէս:

Աչերդ սիրոյ ատրուշան,
Մատներդ էին գիրդ շուշան,
Այտերդ վարդի նոր թերթեր
Նայուածքէդ ծնէր նոր եթեր:

Սիրաս թրռաւ ոտքիդ տակ,
Սիրեցի քեզ, իմս հրեշտակ...
Սիրով եղան ձիւն մազեր,
Ըսին՝ կեանքը երազ է։

Մինչդեռ դու չես սիրեր դիս,
Մ՚ իշխեր զոնէ տկար սրտիս.
Ուր որ երթամ, զէմքդ ինձ հետ՝
Նայուածք չէ այդ... մահո՜ւ նետ։

Երբ անտառին խորն նըստիմ
Կ՚ երթամ լալ՝ լուռ մենաձիմ,
Դարձեալ հոն կը զանես դիս,
Տերեւներէն կը խօսիս։

Երբ առուակին եզերքը՝
Նըստիմ սփոփել իմ վէրքը՝
Դարձեալ դու կը գըտնես դիս,
Ալեաց մէջէն կը ժպտիս։

Երբ լեռները կը փախչիմ,
Որ չը տեսնեմ քեզ՝ հանդչիմ,
Հոգմոյն մէջէն կը խօսիս,
Թէ՝ դու բնաւ չ՚ ե՜ս սիրեր դիս։

Լուսնի լուսով դիշերը
Երբ ցօղեն իմ աչերը,
Դարձեալ դու կը գտնես դիս,
Աստղերուն մէջ կը ժըպտիս։

Իսկ գերեզման երբ մտնեմ,
Քեզ հոն պիտի չը գտնեմ...
Մընաս բարեաւ... հայուհիս,
Անգո՜ւթ, արցունք մ՚ ալ չ՚ ունիս։

ԿԸ ՍԻՐԵՄ ԶՔԵԶ.

(*Սևագրութիւն* «ԻՑԻՒ ԹԷ»-ի).

Ո՜հ, ո՞վ ես դու, սէր, երկնային շունչ կամ հո՞ւր,
Քու սեւ անո՞ւշ աչերդ չ՚ունի գիշերը,
Վարդը չ՚ունի քու լանջդ ամբիծ ձիւնաթոյր,
Լուսին չ՚ունի քու վարդագոյն այտերը։

Ցայգն՝ ասաղերուն փաղփուն՝ լուսնոյն սիրադէմ,
Ցերեկն ալեաց, ծաղկանց ժըպտիս, մէկուն... զէթ,
Իսկ քեզ համար ես արցունքով կ՚ աղօթեմ,
Դու չես շնորհեր նայուածք մ՚ ինձ սեւ աչերէդ։

Արդեօք էա՞կ մ՚ ես թէ երկնից զըւարթուն.
Կը նախանձին գեղոյդ վրայ վարդ, լուսնակ,
Ձայնիկդ ապշած լըսելով քաղցր ու թրթռուն՝
Նոճեաց խորերն կը ոգայ լռին լուսինեակ։

Այլ ինչ քաղցր է, եթէ ըլլամ ես զեփիւռ,
Եւ գրգռելով մազերդ խարտեաշ ու անոսր,
Ցամ շունչս յուշիկ այտերուդ վարդաւփիւռ,
Սըրրեմ, եթէ կայ, աչքերուդ մէջ արտասր։

Պարտէզիդ մէջ իցէ՞ւ թէ վարդ մ՚ ըլլամ ես,
Եւ երբ դու դաս առաւօտուն ժըպտով պերճ,
Որ քու այտերդ կարմիր գունովըս նեղկես,
Թոռմիմ... փափկիկ ձեռքիդ մէջ տամ կեանքիս վերջ։

Երանի թէ վրտակ մ՚ ըլլամ ես վրճիա,
Եւ երբ յուշիկ նըստած մօտ իմ եղերքին՝

Պատկերանայ հայելոյս մէջ քու ժըպիտ,
Պըղտորելով կապոյտ ալիքըս ցամքին։

Այլ ոչ, անգութ, եթէ ունիս սիրահար,
Ցի՛ւ թ՚ անոր գերեզմանին վէմն ըլլամ,
Եւ հոն թափած դառն արցունքներդ ծրծեմ յար,
Ըզգամ զէմքդ... այլ ոչ, թէպէտ վէմն, այլ կուլամ։

Ո՜հ, դու սիրէ, գըղուէ, ժպտէ, հայ աղջիկ,
Քեզի համար պիտի մեռնիմ, թող պըպլուն
Արցունք մ՚ հեղու դագաղիս վրայ սեւ աչիկդ,
Տըխուր շիրմիս վերեւ երգէ թռչդ պլպուլն։

ՀԱՅՈՒՀԻՆ.

Աշնան մէջ էր, երեկոյ մը
Վերադարձիս յիւսկիւտար,
Օդը պարզ էր, հողմը մեղմիկ,
Ծովուն ջուրերն ալ հանդարտիկ։

Զոգենաւին սարաւանդը
Նըստած անկիւն մ՚ առանձնակի՝
Ուշադրութեամբ ես նոյն օրուան
Լըրագիրները կարդայի։

Մէկ մ՚ ալ յանկարծ սանդուխէն
Վեր ելնելու ոտնաձայն մը
Ըլլոթեց զիս, եւ աչերս
Դարձուցի զէպ յայն կողմը։

Հայուհի մ' էր վեր ելնողն,
Բարձրահասակ եւ գեղադէմ.
Անցաւ մօտէս նա սիգաձեւ,
Նոսաւ անկիւն մ' ինձ դէմ առ դէմ:

Ո՜հ, կարծես թէ նա երկնային
Զբաղթուն մ' էր վար իջած՝
Լոյս սփռելու, սէր բուրելու,
Խրոսվելու սրտերն այրած:

Այլ չը գիտեմ թէ ինչու
Գրկին աչերքս յառած,
Իմ թերթիկիս վրայ միշտ՝
Սիրաս էր ամբողջ խրոսված:

Մինչեւ մէկ մ' ալ նաւասին
Խոսքս ձայնով մը գալով մօտ՝
Ըսաւ. «Հասանք յիւսկիւտար,
Ալ ինչ նստեր ես դու հոդ»:

Վեր վերցուցի աչերքս,
Ոչ օր տեսի մէջ նաւին.
Մինակ էինք երկուքնիս,
Մէկ մ' ես, մէկ մ' ալ... նաւասին:

Ը.

Երկոյեան բալն կը սողար բարդիկ խաւ,
Այն լուսազարդ անդունդն հիւսել լուռ ու սեաւ,
Ցքխուր բատուեր՝ զոր կը ձրգէր իր եանեւ
Լուսափթիթ օրն սիրայնոց կարճատեւ։
Կը նշմարուէր հազիւ երկնի կապուտակ
Գմբէթին խոր փալփլող՝ 'ւ ալեոյն ջինջ յատակ
Անդրադարձող՝ գիշերուան լոյսն անդրանիկ,
Զոր գրկեցին շուտ վոսփորեան խոնջ ալիք։
Մարը մանող արփւոյն մարէր հուսկ շառայլ
Սառնամանուտ բլրոց վերայ քայլ առ քայլ,
Ինչպէս հիւծեալ կոյսի մ' ակնարկ առ դամբան՝
Ուր պարեն ցուրտ ծիծաղք սիրոյ դառնութեան,
Ինչպէս եւ իմ դիւթեալ ակնարկս առ արօր՝
Զոր մրթագնեց մառախուղ մի նախանձոտ,
'Ի ալ չկրցի ընդնշմարել էակն ան՝
Զոր զգուէին ճաճանչ՝ գեփիւռ իրիկուան,
Հողմածածան իր շրջազգեստն ու հոպոպք,
Դեղձան վարսից գիրգ ուլան շուրջ ոսկի ծոպք.
Կարծես ծաղիկ մ' էր երազի հիասքանչ,
Կը կոխկռտէր այն ծաղկալից մարգաց լանջ.
Թողէք կոխել, զի կը փթթէ աւելի,
Երբ որ հովիկըն այտէն գոյն գեղանի
Եւ իր ամբիծ լանջէն առած քիչ մը հոտ՝
Ցանի սփռէ անապատներն աւազոտ՝
'Ի ահա փթթեն ծաղիկներ բիւր առաւել.
Անոր համար ինչ է ծաղիկը ծաղկել,

Մինչդեռ սիրոյ կէս դիակներ կը յառնեն՝
Երբ սեւ աչքէն սրլաք մ՝ ուղղէ բոցեղէն։
Լուսինն արդէն կը քօղարկէր 'պճնէր դինք
Նուրբ ամպիկով՝ ուսկից ուսան թրքուհիք
Ծածկել իրենց դէմքն հաճաղով նրբաթել,
Անոր նման դրժոյն ըլլալ ու դիւթել։

Լուսին, գրաւիր լոյս ցօղելու ցածուն հիւղ,
Ուր դէթ ցամքած է կանթեղին առկայծ իւղ.
Մի, մի սրվիր գաղջ արեւէն ձմեռուան՝
Մոռնալ հիւղն՝ ուր ամայի է վառարանն,
Եւ լոկ սրտերն հոն կը մրխան յուսահատ...
Ծաղէ հիւղին այն՝ բանաստեղծն ուր աղքատ՝
Ինք լոյս՝ կրակ, ոչ մէկն ունի գրրելու.
Սարն իր աստեղց թոր՝ դղեակն ալ ջահերու,
Գինա՛ ցօղել լոյս տնակին այն ցածուկ՝
Ուր մայր մը դիրկն առած կայտառ մի մանուկ՝
Ցոյց տալ կ՝ ուղէ քեզ Աստուծոյ գերթ պատկեր,
Դու, որ միայն սիրահարաց ես լապտեր։

Ցերեւներուն մէջէն արծաթի լի լուսինն
Կը դիտէի՝ ինչպէս որ դէմքն հարս կուսին՝
Երբ կը ծածկէ քօղքն հիմնեան ոսկեթել.
Բայց սա վարդի փոխան դիտէ լոյս փթթել։
Ալ լոյսն աղօտ եւ կարծես թէ աւելի
Երկնքի լուրջ խորը սուզած կը փայլփլի,
Եւ վերջալոյսն ալ կը մարի, որ դեռ հոն
Հրդեհի պէս բոցավառէր զհորիզոն։
Եւ դա՛ք, կրրակք սիրոյ, մարիք շուտ եւ դուք,
Ցեւէք՝ ինչպէս վերջալոյսն այս բոցաշուք...։

Արդեօք արեւն այսօր ոչքան սիրարոյր
Կուսից լոյս դէմքն այրեց՝ ուսկից մեղմ համբոյր
Քաղել դողաս, կը վախնաս թէ կը թօշնի
Իր այտերուն վառ վառ վարդեր գեղանի։
Թաւուտ այսօր շուքերնուն մէջ առանձին՝
Խորհրդաւոր ի՞նչ փսփրսուք լսեցին,
Ի՞նչ խոսուումներ, ի՞նչ մրմունջներ սրամաշուք.
Իսկ դուք, մանաւանք հովանոցակք, ան, իսկ դուք՞՞՞...
Ո՛վ հովանիք, թաւուտք, խորշեր անմարդի
Ուր դայլայլիկ թռչնոց՝ խոշիւն սաղարթի,
Եւ երբ լրսուի շրջագիսաի մը շրշիւն,
Զոր տերեւոց վրայ սփռէ մերկ աշուն,
Երբ շուքին տակ կոյս մ՝ առանձին ընէ ման,
Նա տերեւոց նաեւ դողամ անոնց նման,
Որ չըլլայ թէ դիպիմ աչքին բոցեղէն,
(Պէտք է դողայ միթէ տերեւն արեւէն)։
Երբ ծիծառնուկն ինձ հետ հնծէ աղեկէզ,
Ո՞ըչափ ատեմ քաղքին ժխորն, սիրեմ Զեզ։

(Հիւանդութեանս պատճառով ընդհատուած)։

Վ Ե Ր Ջ

Դժուարիմաց բառեր.

Ընդախտիզ—աչք շլացնող.
Ընալի—անյատակ.
Ընդրիանդ—արձան.
Ընդնիլ—նստադիլ, սիրտը թուլանալ.
Ոսոդալոյց—ասաղեր վառուած.
Ոալ—մշուշ.
Ոարդիլ—դիպուիլ.
Ոսոր—կարմրութիւն.
Ոիրգ—փափլիկ.
Ոգած—կորացած.
Ոա—շորացած.
Ոլուկ—դեղնութիւն, դժգունութիւն.
Ոեղան—դեղնագոյն.
Ոխեմ—անգութ.
Ոիրդ, գերթ—նման.
Ոուրթուն—հրեշտակ.
Ոախիծ—խոր տխրութիւն.
Ոուտա—ծառոտ տեղ.
Ոեւ—թէն.
Ոթռակ—թրթռացող.
Ոշնիլ—թառամիլ.
Ոպրիլ—յանդգնիլ.
Ոմրիլ—թառամիլ.
Ոբշոփ—տերեւի ձայն.
Ոնդալ—ուրախանալ.
Ոկ—մաածում, մտորմունք.
Ոկալ—խորհրդաւոր մտածել.
Ոնջ—յոգնած.
Ոութ—խաչընդոտ քարեր.
Խրախ—ուրախ, պերճ.
Խշիւն—տերեւի ձայն.
Կերտ—շինել, շինուածք.
Համբուն—ամբողջ.
Հանգոյն—նման.
Հուշաղ—երեսի քօղ.
Հեշտին—դուրեկան.
Հոպոպ—քունքերից կախուած մազեր.
Հով—քամի.
Հուսկ—վերջին.
Հպիլ—դպչիլ.
Հրատ—հրեղէն.
Զիւնաթոյր } —ձիւնագոյն,
Զիւնաթորմի }
Զմրահուպ—ձմեռուան մօտ.
Զորձ—զգեստ, շորեր.
Մառ—աչքի մթութիւն.
Մորչ—գալաք կանաչ.
Ցամայր—շատ տարիներ.
Ցամբ—դանդաղ.
Ցափրիլ—շատ կշտանալուց գըդուիլ.
Ցուշիկ—կամաց.
Նսեմ—մութ.
Ջառագունիլ—կարմրիլ.
Ջառայլ—շողք, ճառագայթ.
Ջիկնիլ—կարմրիլ.
Ջիկնոտ—կարմրող, ամաչկոտ.
Ջպարիլ—երեսը նեղկ քսել (կանանց).

[3 հ.]

230

Ուլան — վզի (ուզ, ուլ).
Պլլուիլ — փաթթաթուիլ.
Մաղարթ — տերևներ.
Սաբաւանդ — վերնայարկի մոտով զօրծածուած.
Սեւաթորմի — սեւազոյն.
Սնար — գլխավերեւ.
Վայրիկ — վայրկեան.
Վառէ — բարակ շղարշից շինուած.
Վէս — սէգ, հպարտ.
Տիպար — նման.
Տայզ — գիշեր.
Փաղփուն — փայլուն.
Փթթիլ — ծաղկիլ.
Փթիթ — ծաղկում.
Փողփողիլ — փայլփլիլ։

ԼՍԵԿԱՍՍՈ ԳՐԱԴԱՐԱՆԻ ԴՍՊԱՆ